Դեմոյան Հայկ Անուշավանի

Ծնվել է 1975թ. մայիսի 22-ին Լենինական քաղաքում։
1982-1992 թթ. սովորել է Գյումրիի թիվ 22 միջնակարգ դպրոցում։
1993-1998թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում՝ մասնագիտանալով ազգագրության ամբիոնում։
1998-2001թթ. ընդունվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի ասպիրանտուրա։
2001թ. պաշտպանել է «Սոցիալ-տնտեսական բարեփոխումները Թուրքիայում 1980-1990-ական թթ.» թեկնածուական ատենախոսությունը, ստանալով պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան։
2002-2005թթ. դասավանդել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի Հայաստանին հարակից երկրների պատմության ամբիոնում։
2003-2004թթ. աշխատել է Լրատվամիջոցների կովկասյան ինստիտուտում՝ որպես փորձագետ։
2006թ. ապրիլ-նոյեմբեր ամիսներին աշխատանքի է անցել ՀՀ Նախագահին կից Քաղաքական հետազոտությունների ինստիտուտում՝ որպես տեղեկատվության համակարգման բաժնի վարիչ։
2004-2006թթ. հանդիսացել է ՀՀ ՊՆ ներկայացուցիչը Գուրգեն Մարգարյանի սպանության գործով Բուդապեշտում տեղի ունեցած դատաքննությունների ընթացքում։
2006թ. նոյեմբերին ընտրվել է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն, իսկ 2012թ. հունվարին՝ վերընտրվել է նույն պաշտոնում։
Հեղինակել է 10 մենագրություն և 40 գիտական հոդված։
2012թ. փետրվարի 28-ին պաշտպանել է դոկտորական ատենախոսության թեզ «Ղարաբաղյան հակամարտությունը և Թուրքիան. պատմահամեմատական վերլուծություն» թեմայով՝ ստանալով պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան։
2009թ.-ից ՀՀ Նախագահին առընթեր Հանրային խորհրդի անդամ է։
2011թ. ապրիլից Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի քարտուղարն է։

Անդամակցում է Ցեղասպանագետների միջազգային ընկերակցությանը։ ԵՊՀ կառավարման խորհրդի, Երևան քաղաքի պատմության, Ազգային գրադարանի գիտական խորհուրդների անդամ է և Հայոց ցեղապանության թանգարան-ինստիտուտի գիտխորհրդի նախագահ։
Հայոց ցեղասպանության ճանաչման գործում նշանակալի ավանդ ներդրած անձանց շնորհվող նախագահական մրցանակի հանձնաժողովի անդամ է։
Պարգևատրվել է ՀՀ ՊՆ «Գարեգին Նժդեհ» և «Զորավար Անդրանիկ» գերատեսչական մեդալներով։
2013 թվականի մայիսի 5-ին Հայաստանի Հանրապետական կուսակցության համամասնական ցուցակով ընտրվել է Երևանի ավագանու անդամ։
Ամուսնացած է։